



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԱՍԱՏՈՒՐ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 361-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 361-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 15-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Ասատուր Սիմոնյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի և 361-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Ասատուր Սիմոնյանը (ներկայացուցիչներ՝ Ա. Թևանյան, Մ. Մանուկյան) դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի հուլիսի 14-ին)՝ խնդրելով.

1. Որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածին, 63-րդ հոդվածին, 75-րդ հոդվածին, 78-րդ հոդվածին և 81-րդ հոդվածին, այնքանով որքանով, ապացույցի ապահովման միջնորդության քննության արդյունքում միջնորդությունը մերժելու մասին որոշումը՝ որպես վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտ սահմանված չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասում:

2. Որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 75-րդ և 79-րդ հոդվածներին:

2. Սույն անհատական դիմումով դիմողի կողմից բարձրացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի և 361-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի սահմանադրականության հարց:

Անդրադառնալով ապացույցի ապահովման միջնորդությունը մերժելու դեպքում դատարանի կողմից կայացված որոշման վերադաս ատյանում բողոքարկման կառուցակարգին և ընթացակարգին՝ դիմողը նշում է, որ առհասարակ բացակայում են որոշումը երկրորդ ատյանում բողոքարկելու կարգավորումներ, իսկ դա, ըստ դիմողի, այն դեպքում, երբ ապացույցի ապահովման ինստիտուտն ունի առանցքային ընդհանրություններ հայցի ապահովման ինստիտուտի հետ:

Մասնավորապես, դիմողը, զուգահեռներ անցկացնելով հայցի ապահովման և ապացույցի ապահովման ինստիտուտների միջև, նշում է, որ եթե օրենսդիրը հայցի ապահովման միջնորդությունը մերժելու դեպքում սահմանել է կայացված որոշման առնվազն երկրորդ ատյանում բողոքարկելու կառուցակարգ և ընթացակարգ, ապա վերջինիս մոտեցումն ապացույցի ապահովման միջնորդությունը մերժելու դեպքում կայացված որոշման մասով ևս պետք է լինի նույնանման կամ առնվազն օրենսդիրը, ըստ դիմողի՝ պետք է սահմաներ որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն:

Դիմողը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությանը նաև օրենքի բացի շրջանակներում, նշել է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասում սպառիչ թվարկված են այն դատական ակտերը (բացառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի), որոնք ենթակա են բողոքարկման վերաքննիչ քաղաքացիական դատարանում: Նշված ցանկում բացակայում են ապացույցի ապահովման միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերաքննիչ քաղաքացիական դատարանում բողոքարկելու վերաբերյալ կարգավորումներ, հետևապես, ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով չի նախատեսում ապացույցի ապահովման միջնորդությունը մերժելու մասին որոշումը բողոքարկելու վերաբերյալ կարգավորումներ, հակասում է Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի վերաբերյալ դիմողը նշում է, որ սույն կետի իրավակարգավորումը վիճահարույց է որոշակիության և հիմնական իրավունքների կարգավորման շրջանակներում՝ իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի սահմանման համատեքստում: Դիմողը նշում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը խնդրահարույց է նաև այնքանով, որքանով հնարավորություն է տալիս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից տարբերվող այլ նորմատիվ իրավական ակտով՝ օրենքով նախատեսել վերաքննիչ քաղաքացիական դատարանում բողոքարկման ենթակա դատական ակտ:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով, մասնավորապես.

սույն գործի դատավարական նախապատմությունը վկայում է. Կոտայքի մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԿԴ/6584/02/20 քաղաքացիական գործի շրջանակներում 2020 թվականի դեկտեմբերի 29-ին «Ապացույցի ապահովման վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ մերժել է դիմողի՝ ապացույցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը: Այնուհետև վերը նշված որոշման դեմ Ասատուր Սիմոնյանի ներկայացուցչի կողմից 11.02.2021թ. ներկայացվել է վերաքննիչ բողոք, որի կապակցությամբ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 25.02.2021թ. կայացրել է «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշում՝ դիմողի կողմից վերաքննության կարգով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ բողոքարկելու հիմքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է առաջին աստյանի դատարանի այն որոշումների շրջանակը, որոնք վերաքննության կարգով ենթակա են բողոքարկման: Վերջինս այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս անձին անմիջական կարգով բողոքարկել առաջին

ատյանի դատարանի դատական ակտերը: Առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտերի բողոքարկման մյուս հնարավորությունը «հետաձգված բողոքարկումն» է:

Սույն անհատական դիմումով դիմողի կողմից վիճարկվող դրույթը նրա նկատմամբ կիրառվել է միջանկյալ դատական ակտով: Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում, մասնավորապես, 2010 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-918 և 2010 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշումներում անդրադարձել է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հնարավորությանը՝ արձանագրելով, որ՝ «... օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում», և միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում: Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է և ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է»:

Համադրելով Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումները սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ ապացույցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշումը չի կասեցնում գործի հետագա ընթացքը, հետևաբար՝ նման միջանկյալ դատական ակտերի բողոքարկման կարգի ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է:

Վերոգրյալից բխում է, որ դիմողի կողմից ներկայացված հիմնավորումներն ակնհայտ անհիմն են, իսկ ներկայացված անհատական դիմումով գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Ասատուր Սիմոնյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի և 361-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**

5 օգոստոսի 2021 թվականի
ՍԴԱՌ-172



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ